ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

**Հաստատված է ամբիոնի նիստում**

պատմության
______________________________
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ Ֆ.Վ.Մովսիսյան /Ա.Ա.Հ/

Արձանագրություն № 7

«20» դեկտեմբերի 2023 թ.

# Պ/Բ – 002- ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ -2

Դասիչ, դասընթացի անվանում

## ԴԱՍԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

**Մասնագիտություն՝** **022201.00.6 - «Պատմություն»**
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

**Կրթական ծրագիր՝** **022201.01.6 - «Պատմություն»**
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

**Որակավորման աստիճան՝** **բակալավր**
/բակալավր, մագիստրատուրա/

**Ամբիոն՝** **պատմության**
/ամբիոնի լրիվ անվանումը/

**Ուսուցման ձևը՝** **հեռակա**
/առկա, հեռակա/

**Կուրս/կիսամյակ**

հեռակա **երկրորդ կուրս, առաջին կիսամյակ**

**Դասախոս(ներ)՝** **Արթուր Մելիքյան**
/անուն, ազգանուն/

էլ. հասցե arthurmelikyan@rambler.ru

Վանաձոր- 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում 3
2. Դասընթացի նպատակը և խնդիրները 3
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները 4
4. Դասընթացի կրթական վերջնարդյունքները
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների
6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը
7. Ուսումնական աշխատանքները տեսակները
8. Դասավանդման մեթոդներ
9. Ուսումնառության մեթոդները
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը
11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ
12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ
    - 12.1 Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ
    - 12.2 Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ
    - 12.3 Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ
    - 12.4 Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ
13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում
14. Գնահատում
    - 14.1 Ուսանողների գիտելիքների ստուգում
    - 14.2 Հարցաշար
    - 14.3 Գնահատման չափանիշներ
15. Դասընթացի համառոտ նկարագրիչ

## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

**1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում[1].**

**«Հայոց պատմություն 2»** դասընթացը կարևորվում է պատմագիտության բնագավառում մասնագետների պատրաստման գործընթացում, ներառված է 022201.01.6- Պատմություն կրթական ծրագրի ուսումնական պլանի «Հատուկ մասնագիտական» կրթամասում: «Հայոց պատմություն - 2» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը կազմված է բակալավրի հիմնական կրթական ծրագրով, ՎՊՀ– ում բարձրագույն մասնագիտական կրթության պետական չափորոշիչներով կազմված ուսումնական պլաններին համապատասխան: «Հայոց պատմություն-2» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նպատակաուղղված է բակալավրական կրթության կազմակերպման, դասավանդման որակի բարձրացմանը, ուսումնական գործընթացը ուսումնամեթոդական նյութերով, նորարարական մեթոդներով ապահովմանը: «Հայոց պատմություն-2»-ով նախատեսվող ուսումնական նյութն ընդգրկում է Մ. թ. I դ. սկզբներից մինչև Հայաստանում սուլջուկ թյուրքական տիրապետության վերջն ընկած ժամանակամիջոցը:

**2. Դասընթացի նպատակը և խնդիրները.**

**2.1.**Դասընթացի նպատակն է.

- Բազմակողմանի պատկերացումներ տալ ուշ անտիկ և միջնադարի դարաշրջաններում հայկականն քաղաքակրթության քաղաքական, հասարակական-տնտեսական և մշակութային զարգացման ինքնատիպ ընթացքի, հարևան երկրների ու ժողովուրդների հետ նրա բազմաբնույթ փոխհարաբերությունների մասին:
- Տեսական գիտելիքներ տալ Արշակունիների պետականության, Հայաստանում պարսկա-հռոմեական (բյուզանդական) և արաբական տիրապետությունների, Բագրատունիների պատականության ձրավորման, զարգացման և անկման, սելջուկ թյուրերի արշավանքների ու տիրապետության հաստատման մասին:
- Տեսական գիտելիքներ տալ ուշ անտիկ դարաշրջանում և միջնադարում հայ ժողովրդի մղած ազատագրական շարժումների ընթացքի, արդյունքների ու հետևանքների մասին:
- Համակարգված պատկերացում տալ ուշ անտիկ դարաշրջանում և միջնադարում Պատմական Հայաստանի տարածքում կատարված էթնոքաղաքական և ժողովրդագրական տեղաշարժերի, մշակույթային կյանքի և հասարակական հարաբերությունների մասին:
- Ձևավորել Հայոց պատմական ընձեռնած տվյալները համակարգելու, տեսական վերլուծության ենթարկելու, սեփական դիրքորոշումը փաստարկելու և ինքնուրույն հետևություններ անելու կարողություն:

**2.2.**Դասընթացի խնդիրներն են.

[1] Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթաբլոկների

- Սովորեցնել Հայոց պատմության ուշ անտիկ և միջնադարի դարաշրջանների տեսական հիմքերը:
- Բացատրել հայկական միջնադարյան քաղաքակրթության տեղը և դերը համաշխարհային պատմության մեջ:
- Ձևավորել հայագիտական նյութի հետ աշխատելու և ձեռք բերված ինֆորմացիայի տարբեր ձևերը օգտագործելու, տեղեկատվության հավաքման, պահպանման և մշակման ունակություն, տեղեկույթը կառավարելու, իր դիրքորոշումը փաստարկելու և ինքնուրույն հետևություններ անելու կարողություններ,
- Ամրապնդել ուսանողների կողմից ձեռքբերված տեսական գիտելիքները գործնական իրավիճակային խնդիրներով:

## 3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները

**«Հայոց պատմություն 2»** դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է ուսանողների գիտելիքների և հմտությունների առկայությունը «022201.01.6 - պատմություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրում ուսուցանվող «Հայաստանի պատմական աշխարհագրություն», «Հայոց պատմություն 1», «Միջին դարերի պատմություն» դասընթացներից:

## 4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը[2] և /կամ կոմպետենցիաները.

**«Հայոց պատմություն»** դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքներն են.

1. իմանա Հայոց պատմության տեսական հիմունքները,
2. իմանա Հայոց պատմության ուսումնասիրման մեթոդական հիմքերը,
3. կարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում՝ պատմական իրողությունները հասկանալու, փաստերն ու երևույթները համեմատելու, Հայոց պատմության փուլերն ու դրանց օրինաչափությունները համադրելու և համակողմանի գնահատելու, վերլուծելու, դիրքորոշումներ ձևակերպելու համար,
4. կարողանա համադրել հին և միջնադարյան Հայոց պետականությունների վարչաքաղաքական փորձը, վեր հանել դրանց ժառանգորդության և մշակութային ընդհանրության հարատևման պատճառներն ու առանձնահատկությունները,
5. կարողանա համակարգել Հայոց պատմության վերաբերյալ բազմաբնույթ գիտելիքները, դրանք ենթարկել տեսական վերլուծության, փաստարկել սեփական դիրքորոշումը և կատարել ինքնուրույն հետևություններ,
6. կարողանա վերլուծել օտար տիրապետությունների ընթացքում Հայաստանի վարչական համակարգերի վերափոխությունների ընթացքը, Հայաստանի էթնիկ և ժողովրդագրական պատկերների փոփոխությունները,

---

[2] http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf
Լրացվում է «Առարկայի նկարագրի մշակման ռազմավարության» կոմպետենցիաների ցանկին համապատասխան:

7. կարողանա ձևավորել դիրքորոշումներ Հայոց պատմության ուշ անտիկ և միջնադարյան դարաշրջանների հիմնախնդիրների նկատմամբ և կատարել դրանց հետազոտություն:

**Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.**

**Ա)Ընդհանրական կոմպետենցիաներ**

**Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)՝**

ԳԿ1 վերլուծելու և սինթեզելու ունակություն,

ԳԿ4 մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ,

ԳԿ9 խնդիրների լուծում,

ԳԿ10 որոշումների ընդունում:

**Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)՝**

ՀԳԿ1 գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,

ՀԳԿ2 հետազոտություններ կատարելու ունակություններ,

ՀԳԿ3 սովորելու ունակություն,

ՀԳԿ8 ինքնուրույն աշխատելու ունակություն,

**Բ)Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)**

ԱԿ2 հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները,

ԱԿ4 ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,

ԱԿ6 կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները,

ԱԿ11 տիրապետեն ինքնուրույն հետազոտության մեթոդներին և կարողանան մեկնաբանել հետազոտության արդյունքները,

ԱԿ14 տիրապետեն տվյալ մասնագիտական մակարդակում պահանջվող կոմպետենցիաներին:

## 5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների[3].

«Հայոց պատմություն 2» դասընթացից ձեռք բերված գիտելիքներն և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել պատմաբանի, պատմության ուսուցչի մասնագիտական գործունեության ընթացքում, էքսկուրսավարի աշխատանքում, նաև ասպիրանտուրայում կրթությունը շարունակելու և գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:

## 6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

| Չափանիշ | Առկա ուսուցման համակարգ | Հեռակա ուսուցման համակարգ |
|---|---|---|
| Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ) | | 5 կրեդիտ/150 ժամ |

| Աշխատանքի տեսակը | ժամաքանակ | ժամաքանակ |
|---|---|---|
| Դասախոսություն | | 12 |

[3] Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել

| | | |
|---|---|---|
| Գործնական աշխատանք | | |
| Սեմինար պարապմունք | | 8 |
| Լաբորատոր աշխատանք | | |
| Ինքնուրույն աշխատանք | | 130 |
| **Ընդամենը** | | 150 |
| Ստուգման ձևը՝ քննություն | | |

7. **<u>Ուսումնական աշխատանքների տեսակները</u>**[4] .

- **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեսզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:
- **Սեմինար պարապմունքները** խմբային պարապմունքների հիմնական տեսակներից է, որի ընթացքում ուսանողը սովորում է բանավոր շարադրել նյութը, պաշտպանել իր տեսակետները և եզրահանգումները: Սեմինարի ընթացքում ուսանողները քննարկում, պատասխանում են թեման, զեկույցները և ռեֆերատները, որոնք հանձնարարել է դասախոսը:
  Սեմինարին պատրաստվելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել հիմնական և լրացուցիչ գրականություն տվյալ թեմայով: Գրականության ուսումնասիրությունից և համառոտագրումից հետո պետք է կազմել պլան՝ բանավոր պատասխանի համար, ապա մտածել ելույթի բովանդակությանհարցադրումների և պատասխանների մասին:
- **Լաբորատոր աշխատանքները** նպաստում են տեսական նյութի առավել լավ յուրացմանը և ամրապնդմանը: Լաբորատոր աշխատանքները նպատակ ունեն ամրապնդելու ուսումնասիրվող թեմաների տեսական դրույթները, ուսանողներին ուսուցանելու փորձարարական հետազոտությունների մեթոդները, հաղորդելու ինքնուրույն վերլուծության, տվյալների ամփոփման, լաբորատոր սարքավորումների, համակարգիչների, սարքերի, էլեկտրոնային ծրագրերի հետ աշխատելու փորձ և հմտություններ: Լաբորատոր աշխատանքն անցկացման համար ուսանողը պարտավոր է ուսումնասիրել թեմային

[4] Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

վերաբերող տեսական նյութը (դասախոսություն, համապատասխան գրականություն) և փորձի, հետազոտության մեթոդոլոգիան:

Դասախոսի հսկողությամբ ուսանողը իրականացնում է փորձը, հետազոտությունը, գրանցում է արդյունքները և կատարում (գրանցում) համապատասխան եզրակացություն

- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

  Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են[5]՝

  - Ռեֆերատ – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
  - Գործարար խաղեր – պայմանական իրավիճակներում սոցիալ-տնտեսական համակարգերի և մարդկանց մասնագիտական գործունեության կառավարման գործընթացների նմանակեղծային մոդելավորում՝ առաջացող հիմնախնդիրների ուսումնասիրման և լուծման նպատակով:
  - Էսսե – արձակ ստեղծագործություն՝ քննադատության և լրագրության ժանրի որևէ խնդրի ազատ վերլուծություն:
  - Կլոր սեղան – ինքնուրույն աշխատանքի ձևին բնորոշ է թեմատիկ բանավեճի համադրումը խմբային աշխատանքի հետ:
  - Կոնկրետ իրավիճակների վերլուծություն – ուսանողների ակտիվ գործունեության կազմակերպման ամենաարդյունավետ և տարածված ձևերից մեկն է, որը զարգացնում է մասնագիտական և կեցությանը վերաբերող տարբեր հարցերի վերլուծության կարողությունը:
  - Նախագծերի մեթոդ – ուսումնաճանաչողական, ստեղծագործական կամ խաղային համատեղ գործունեության տեսակ է, սովորող-գործընկերների միջև, որոնք ունեն ընդհանուր նպատակ և համաձայնեցված միջոցներ՝ ուղղված որևէ խնդրի լուծման կամ որոշակի արդյունքի ձևակերպման:
  - Հարցի նախապատրաստման մոդել –կամավորության սկզբունքով ընտրված ուսանողն իր նախընտրած հակիրճ ձևով նախապատրաստում է տվյալ առարկայից քննության կամ ստուգարքի հարցերի իր պատասխանների փաթեթը: Քննությունից (ստուգարքից) 1 շաբաթ առաջ նա հանձնում է փաթեթը դասախոսին, որը ստուգում է այդ նյութերը և որոշում դրանց համապատասխանությունը տվյալ առարկայի բովանդակությանը:
  - Ինքնուրույն աշխատանք համացանցում – նոր տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝ համացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնման համար, երկխոսություն համացանցում, թեմատիկ ցանցային էջերի օգտագործում:
  - Աշխատանքային տետր – նախատեսված է ուսանողների ինքնուրույն աշխատանքների համար և թույլ է տալիս գնահատել ուսումնական նյութի յուրացման աստիճանն ուսանողների կողմից:
  - Զեկույց – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:
  - Հարցազրույց – վերահսկողության միջոց, որը կազմակերպվում է որպես հատուկ զրույց դասավանդողի և ուսանողների միջև՝ կապված այնպիսի թեմայի հետ ինչպիսին կարգապահությունն է, և նախատեսված է հստակեցնել ուսանողների գիտելիքների շրջանակը կոնկրետ թեմայի, հարցի վերաբերյալ:

**8. Դասավանդման մեթոդներն են՝**[6] հիմնահարցային դասախոսություն,

[5] Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

[6] Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, *թեմատիկ սեմինար*, սեմինար-բանավեճ, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք, ուսուցում գործողությամբ (action learning), իրավիճակային խնդիրների վերլուծություն, գործարար խաղեր և այլք:

9. **Ուսումնառության մեթոդներն են**[7]՝ մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, ալգորիթմների և հրահանգների կազմում, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում, փորձի/հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում և այլք:

---

[7] Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

## 10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների[8].

| հ/հ | Թեմա (բաժին) | Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | դասախոսություն | սեմինար պարապմունք | գործնական աշխատանք | լաբորատոր աշխատանք | ինքնուրույն աշխատանք |
| 1. | Մեծ Հայքի թագավորությունը 1-ին դ. դրածո արքաների օրոք | 1 | | | | |
| 2. | Պարթևա-հռոմեական հակամարտությունը և Հայաստանը 2-3-րդ դ. սկզբներին | 2 | | | | |
| 3. | Մեծ Հայքը 3-րդ դ. պարսկա-հռոմեական հակամարտության ոլորտում | 2 | | | | |
| 4. | Մեծ Հայքի թագավորության աստիճանական թուլացումն ու անկումը | 2 | | | | |
| 5. | Հայաստանի վարչաքաղաքական դրությունը 5-7-րդ դդ. | | 2 | | | |
| 6. | Ուշ հելլենիստական և վաղ միջնադարյան Հայաստանի մշակույթն ու պետական կարգը | | 4 | | | |
| 7. | Հայաստանը և Արաբական խալիֆայությունը 7-9-րդ դդ | | 2 | | | |
| 8. | Բագրատունյաց թագավորությունը | 2 | | | | |
| 9. | Թյուրքական արշավանքները Հայաստան և նրանց տիրապետությունը | 2 | | | | |
| 10. | Հայ-վրացական ազատագրական պայքարը թյուքերի դեմ 12-13-րդ դդ. և Զաքարյանների իշխանապետության հաստատումը | 1 | | | | |

[8] Նման է օրացուցային պլանին

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 11. | ԸՆԴԱՄԵՆԸ | 12 | 8 | | | |

## 11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

| հ/հ | Անվանումը/հեղինակ | Հրատարակության տարի |
|---|---|---|
| Պարտադիր գրականություն (ՊԳ) | | |
| 1. | Կրկյաշարյան Ս. Մ., Հին Հայաստանի պետական կառուցվածքը (Մ.թ.ա VI-մ.թ. IV դդ.) | Երևան, 2005 |
| 2. | Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, Բ | Երևան, 1977 |
| 3. | Մանասերյան Ռ., Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ | Երևան, 1997 |
| 4. | Հայ ժողովրդի պատմություն ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. 1 | Երևան, 1971 |
| 5. | Հայոց պատմություն, ՀՀ ԳԱԱ հրատ, հ. 1, գիրք II | Երևան, 2022 |
| 6. | Дибвоийз Н. К., Политиеская история Парфии | Санкт-Петербург, 2008 |
| 7. | Olbrycht M., Germanicus, Artabanos II of Parthia, and Zeno Artaxias in Armenia, Klio 98 (2), p. 605-633. | Berlin, 2016 |
| 8. | Մելիքյան Ա., Սալմաստի ժայռաքանդակը. Պատմական Հայաստանի սասանյան մի հուշարձանի վերամեկնաբանություն | Երևան, 2016 |
| 9. | Մելիքյան Ա., Հռոմի արտաքին քաղաքականությունը Մեծ Հայքում Գայոս Կալիգուլայի և Կլավդիոսի կառավարման շրջանում, Պատմագիտական հետազոտություններ, էջ 90-101 | Վանաձոր, 2001 |
| 10. | Մելիքյան Ա., Մեծ Հայքի Արշակունի արքաների պարթևական տերության երկրորդը լինելու հարցի շուրջ, Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 1, էջ 18-28, | Երևան, 2003 |
| 11. | Մելիքյան Ա., Հայաստանն ու Սասանյան հեղաշրջումն Իրանում, Գիտական նյութերի ժողովածու, էջ 172-178Վանաձոր, 2004 | Վանաձոր, 2004 |
| 12. | Մելիքյան Ա., Հայոց գրերի գյուտի անհրաժեշտությունը, Հանրապետական գիտական նստաշրջան, . Նյութերի ժողովածու, էջ 82-87 | Գյումրի, 2005 |
| 13. | Մելիքյան Ա., Պարսկա-հռոմեական հակամարտության և Միսիխիսի պայմանագրով Հայաստանի դե յուրե բաժանման հարցի շուրջ, Վասն արդարության, թիվ 1 (56), էջ 48-55 | Երևան, 2006, |
| 14. | Մելիքյան Ա., Մեծ Հայքի 276 թ. պարսկա-հռոմեական բաժանումը, Վասն արդարության, թիվ 2-3(65-66) | Երևան, 2008, |

| | | |
|---|---|---|
| 15. | Մելիքյան Ա., 377 թ. Պարսկա-հռոմեական պայմանագիրը, Վասն արդարության, թիվ 1(60), էջ 19-27 | Երևան, 2007 |
| 16. | Մելիքյան Ա., Տիգրանակերտի հունարեն արձանագրությունը, Բանբեր Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի, թիվ 3 էջ 132-144 | Վանաձոր, 2008, |
| **17.** | Մելիքյան Ա., Հայ-հռոմեական հարաբերությունները Տրդատ III-ի օրոք, Մխիթար Գոշ, գիտամեթոդական հանդես. Հասարակական գիտություններ, թիվ 1, էջ 39-43 | Երևան, 2009, |
| **18.** | Մելիքյան Ա., Տրդատ III-ի ռազմական վերափոխության հարցի շուրջ, Մխիթար Գոշ, գիտամեթոդական հանդես. Հասարակական գիտություններ, թիվ 1, էջ 70-72 | Երևան, 2007 |
| **19.** | Մելիքյան Ա., Տրդատ III-ի գահակալության հարցի շուրջ, Բանբեր Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի, թիվ 1, էջ 112-117 | Վանաձոր, 2006, |
| **20.** | Մելիքյան Ա., Մ. Խորենացու «Հայոց պատմության» մի վկայության պարզաբանման փորձ, Հանրապետական գիտաժողովի նյութեր, էջ 40-46 | Վանաձոր, 2009 |
| **21.** | Մելիքյան Ա., Հայաստանում Սասանյան թագաժառանգների գահակալության սկզբնավորման և նշանակության հարցերի շուրջ, Արևելագիտությունը Հայաստանում 3, Հին և միջնադարյան Հայաստանը և իր հարևանները, «Գիտություն» հրատ., էջ 137-160 | Երևան, 2017 |
| **22.** | Մելիքյան Ա., Երրորդ դարում Հայաստանում կառավարած Սասանյան արքայազների տիտղոսի հարցի շուրջ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. XXXI, «Գիտություն» հրատ., էջ 47-68 | Երևան, 2018 |
| **23.** | Մելիքյան Ա., Ներսեհ Սասանյանը և գահակալական պայքարը Պարսկաստանում 274-293 թթ., Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. XXXI, (1), «Գիտություն» հրատ., էջ 75-103 | Երևան, 2019 |
| **24.** | Մելիքյան Ա., S 89.4 պարթևական դրամների վերամեկնաբանություն, Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր պրակ Ա, (Հումանիտար և հասարակական գիտություններ և դրանց դասավանդման մեթոդիկա), էջ 62-80 | Երևան, 2019 |
| **25.** | Մելիքյան Ա., «Դաշնակից» և «բարեկամ» արքաների հետ Հռոմի հարաբերությունների ռոմանականացման նախադրյալներն ու դրսևորումները վաղ պրինցիպատի դարաշրջանում, ՎՊՀ Գիտական տեղեկագիր, հումանիտար և հաարակական գիտություններ 2022 /1, էջ 263-286 | Վանաձոր 2022 |
| **26.** | Хуршудян Эд., Армения и Сасанидский Иран, | Алматы, 2003 |

| | | |
|---|---|---|
| **27.** | Մելիքյան Կ., Հայոց եկեղեցու դիրքն ընդհանրական քրիստոնեական եկեղեցու համակարգում IV-VI դարի I կեսին | Երևան, 2016 |
| **28.** | Վարդանյան Վ., Պապ թագավորի եկեղեցական քաղաքականության շուրջ, ԲԵՀ, թիվ 2, էջ 36-43 | Երևան, 1999 |
| **29.** | Վարդանյան Վ., Աղբիանոսների հայրապետական տոհմը, Լրաբեր հաս. Գիտ., թիվ 1, էջ 3-17: | Երևան, 2003 |
| **30.** | Վարդանյան Վ., Հայ առաքելական եկեղեցին Վաղ միջնադարի քաղաքական խաչմերուկներում | Վաղարշապատ, 2005 |
| **31.** | Ժամկոչյան Ա., Մարդպետները և մարդպետական տունը Vդարում, Ավարայրի խորհուրդը, էջ 24-30: | Երևան, 2003 |
| **32.** | Դանիելյան Ա., Տրդատ III-ի զինվորական ռեֆորմը, ՊԲՀ, N 4, էջ 207-218: | Երևան, 1974 |
| **33.** | Դանիելյան Է., Հայաստանի բաժանման տարեթիվը 387 թե 385, ՊԲՀ, թիվ 1 | Երևան, 1980 |
| 34. | Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյցի», | Երևան, 2001 |
| 35. | Հարությունյան Բ., Սպարապետ Վարդան Մամիկոնյանը՝ Հայոց թագավոր, Ավարայրի խորհուրդը, էջ 31-51: | Երևան, 2003 |
| 36. | Հարությունյան Բ., Ե±րբ է քրիստոնեութիւնը Հայաստանում հռչակուել պետական կրօն, Հանդէս Ամսօրեայ, թիւ 1-12, էջ 131-128: | Վիեննա 2006, |
| 37. | Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանուսի դարաշրջանում | Երևան, 1987 |
| 38. | Ադոնց Ն., Երկեր, հ. Ա, | Երևան, 2006 |
| 39. | Yorulmaz L., A Forgotten Borderland: The Upper Tigris between Septimius Severus and Anastasius I: A Master's Thesis, | Ankara 2014 |
| 40. | Օրմանեան Մ., Ազգապատում, հ. 1 | Էջմիածին 2001 |
| 41. | Բրուտեան Գ., Հայոց դարձի թուականի մասին, Հանդէս Ամսօրեայ, | Վիեննա 2001 |
| 42. | Մալխասեանց Ստ, Երբ են հայերն ընդունել քրիստոնեությունը, «Էջմիածին» 1944 | Էջմիածին, 1944 |

| | | |
|---|---|---|
| 43. | Անանեան Պ., Գրիգոր Լուսավորչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները, | Վենետիկ, 1960 |
| 44. | Քասունի Ե., Ժամանակագրական ճշտումներ հեթանոս հայ Արշակունեաց պատմութեան, «Ակօս» ԺԴ (1953), թիվ 3-7 | Ստամբուլ 1953 |
| 45. | Յուզբաշյան Կ., Ավարայրի ճակատամարտից մինչև Նվարսակի պայմանադրությունը¦, | Երևան, 1989 |
| 46. | Ավարայրի խորհուրդը, Գիտական նյութերի ժողովածու, | Երևան, 2003 |
| 47. | Դավթյան Հ., Մեզ անծանոթ Վարդանանց պատերազմը, | Երևան, 2007 |
| 48. | Արմէն Հ., Մարզպանը և Սպարապետը | Լոս Անճէլըս, 1952 |
| 49. | Ադոնց Ն., Մարզպան Վասակը պատմաբանների դատաստանի առջև, տես Երկեր, հ., Ա, | Երևան, 2006 |
| 50. | Միրումյան Կ., Հայ քաղաքական մտքի պատմությունից,: | Երևան, 2002 |
| 51. | Նալբանդյան Վ., Հայերի կողմից պարսկական տիրապետության դեմ ուղղված 451 թ. ապստամբության սոցիալ-քաղաքական պատճառների հարցի շուրջ¦ տե՛ս Տեղեկագիր ՀԳԱԱ, Թիվ 10, | Երևան, 1951, |
| 52. | Մոնթազերի Օ., Մարզպանական Հայաստանը և Սասանյան Իրանը VI դ. 70-ական թթ., Կանթեղ, 2020, էջ 133-141 | Երևան, 2020 |
| 53. | Եղիազարյան Ա., Արմենիա ոստիկանության սահմանները, ՊԲՀ 2005, թիվ 1, էջ 243 -258 | Երևան, 2005 |
| 54. | Եղիազարյան Ա., Արաբների արշավանքները Ատրպատականի վրայով դեպի Հայաստան: Տարեգիրք, 2005, էջ 88-98 | Երևան, 2005 |
| 55 | Եղիազարյան Ա., Արաբների կողմից Հայաստանի նվաճման թվականի շուրջ, ԲԵՀ, 2008, թիվ 1, էջ | Երևան, 2008 |
| 56. | Եղիազարյան Ա.., Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը | Երևան, 2010 |
| 57. | Մանանդյան Հ., Արաբական արշավանքները Հայաստանում, Երկեր, հ. Բ, մաս Ա., | Երևան, 1978 |
| 58. | Մանանդյան Հ., Ժողովրդական ապստամբություններըՀայաստանում արաբական տիրապետության դեմ | Երևան, 1939 |
| 59. | Տեր-Ղևոնդյան Ա., Հայաստանը VI-VIII դարերում, | Երևան, 1996 |
| 60. | Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում | Երևան, 1965 |
| 61. | Դանիելյան Է., Հայաստանի քաղաքական պատմությունը և հայ առաքելական եկեղեցին ¥VI-VII դարեր¤, | Երևան, 2000 |
| 62. | Մինասյան Է., Եղիազարյան Ա., Հայ դիվանագիտությունը VII դարում, «Լրատու» Մեսրոպ Մաշտոց Համալսարանի, էջ 6-24 | Ստեփանակերտ 2008 |
| 63. | Վարդանյան Վ., Բագրատունյաց թագավորության վերելքն ու հզորացումը // «Հայոց պատմություն», հ. II, Միջին դարեր (IV դար-XVII դարի առաջին կես), գիրք երկրորդ (IX դարի | Երևան, 2014 |

| | | |
|---|---|---|
| | կես-XVII դարի առաջին կես), | |
| 64. | Բարխուդարյան Վ., Ֆեոդալական հողատիրությունը Հայաստանում 9-11-րդ դարերում, | Երևան, 2017 |
| 65. | Մաթևոսյան Կ., Անին մայրաքաղաք և կաթողիկոսանիստ, ՊԲՀ, 2008, թիվ 3, | Երևան, 2008 |
| 66. | Մարգարյան Հ., Գագիկ Ա Բագրատունու արտաքին քաղաքականությունը // «Պատմություն և մշակույթ», հայագիտական հանդես, 2019, թիվ 1, | Երևան, 2019 |
| 67. | Բարթիկյան Հ., Բյուզանդիան և հայ պետականությունը X-XI դդ., Լրաբեր հաս. գիտ., 1996, թիվ 2, | Երևան, 1996 |
| 68. | Եղիազարյան Ա., Գագիկ Ա Բագրատունին և նրա տիտղոսները, Հայագիտության հարցեր 2022 (1/25), էջ 43-58 | Երևան 2022 |
| 69. | Հայոց պատմություն ՀՀ ԳԱԱ հրատ. Հատ. II, գիրք երկրորդ | Երևան, 2014 |
| 70. | Բոռնազյան Ս., Հայաստանը և սելջուկները XI–XII դդ., | Երևան, 1980 |
| 71. | Մովսիսյան Ա., Հայաստանի նախամաշտոցյան գրավոր մշակույթի պատմություն | Երևան, 2021 |
| | **Լրացուցիչ գրականություն(ԼԳ)** | |
| 1. | Աստուրեան Հ., Քաղաքական վերաբերությիւններ ընդ մեջ Հայաստանի և Հռովմայ 190-էն Ն.Ք.-428 հ. Ք. | Վենետիկ, 1912 |
| 2. | Իսկանյան Վ., Հայ-բյուզանդական հարաբերությունները IV-VII դդ. | Երևան, 1991 |
| 3. | Շահինյան Լ., Հայաստանը և առաջին Արշակունիները, | Երևան, 1993 |
| 4 | Заграбян А., Прававой статус Армении в противостоянии Рима и Ирана в III в. Н. Э. (По нумизматическим данным), См. Трансформационные процессы в эпоху принципата. Включение Рима в осевое время, Цборник статей, отв. Ред. Е. Магарян, | Ереван, 2015 |
| 5. | §Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա¦, հատ. I, (Հնագույն ժամանակներից մինչև 298 թ), | Երևան, 2007 |
| 6. | Հայ մշակույթի նշանավոր գործիչները | Երևան, 1976 |
| 7. | Նալբանդյան Հ., Արաբների վարչական-հարկային քաղաքականությունը Հայաստանում, | Երևան, 1950 |
| 8. | Մելիք-Բախշյան Ստ., Հայաստանը VII-IX դարերում, | Երևան, 1968 |
| 9. | Հակոբյան Ա., Արքայատոհմերն ու իշխանատոհմերը Բուն Աղվանքում եւ Հայոց Արեւելից կողմանքում Անտիկից մինչև ԺԳ դար, | Երևան, 2020 |
| 10. | Մաթևոսյան Ռ., Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը | Երևան, 1990 |
| 11. | Վարդանյան Վ., Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը | Երևան, 1969 |

| | | |
|---|---|---|
| 12. | Հարությունյան Բ., Արծրունյաց իշխանական ընտանիքը հայոց պատմության մեջ | Երևան, 2016 |
| 13. | Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ. հ. 3, | Երևան, 1976 |

**14 Դասընթացի ուսումնամեթոդական քարտ**

**11.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ**

| հ/հ | *Թեմա* | Ուսումնասիրվող հարցեր | *Ժամաքանակ* | Գրականություն[9] |
|---|---|---|---|---|
| 1. | Մեծ Հայքի թագավորությունը 1-ին դ. դրածո արքաների օրոք | Մեծ Հայքի իրավական կարգավիճակը Արտաշեսյան արքայատան գոյության վերջին շրջանում: Հռոմի քաղաքականությունը Մեծ Հայքի նկատմամբ Արտաշեսյանների մարումից հետո: Դրածո արքաների իրավական իրավական կարգավիճակը: Հայ ավագանու պայքարը Հայոց քաղաքական արժեհամակարգի պահպանման համար, Հայ ավագանու քաղաքական կողմնորոշման խնդիրը: Պարթևա-հռոմեական հակամարտությունը Հայաստանի նկատմամբ վերահսկողության համար, 54-64 թթ. պատերազմն ու հայ ավագանու դիրքորոշումը: Հռանդեայի հաշտությունը: Մեծ Հայքի թագավորությունը Տրդատ 1-ի և Սանատրուկի օրոք | 1 | ՊԳ. 1, 2, 3, 4, 5, 6, 7, 9, 10, 25, ԼԳ 1, 3, 5 |
| 2. | Պարթևա-հռոմեական հակամարտությունը և Հայաստանը 2-3-րդ դ. սկզբներին | Պարթևա-հռոմեական հակամարտությունը Հայաստանի նկատմամբ վերահսկողության համար Տրայանուսի Լ. Վերուսի, Ս. Սևերոսի ու Ա. Կարակալայի Արևելյան արշավանքները և Հայաստանը | 2 | ՀԳ. 1, 2, 3, 4, 5, 6, 10, ԼԳ 1, 3, 5 |
| 3. | Մեծ Հայքը 3-րդ դ. պարսկա-հռոմեական հակամարտության ոլորտում | Սասանյան հեղաշրջումն Իրանում և հայ-պարսկական պատերազմները: Հայաստանը պարսկա-հռոմեական հակամարտության ոլորտում և 244 թ. Միսիխիսի պայմանագիրը: Հայաստանում Սասանյան արքայազների կառավարման սկիզբը, Հայաստանի իրավական կարգավիճակը: 276 թ. պարսկա-հռոմեական հաշտությունը և Հայաստանը: Հայաստանում Սասանյանների իրականացրած կրոնական, սոցիալ-քաղաքական վերափոխումները: Արշակունիների գահակալության վերականգնումը, Մծբին պայմանագիրն ու Մեծ Հայքի վերամիավորումը: | 2 | ՊԳ 1, 2, 3, 4, 5, 8, 11, 13, 14, 15, 16, 21, 22, 23, 24, 26, ԼԳ 1, 3, 4, 5 |

[9] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4. | Մեծ Հայքի թագավորության աստիճանական թուլացումն ու անկումը | Տրդատ 3-ի ռազմա-վարչական և կրոնական վերափոխումները, դրանց նպատակներն ու արդյունքները: Մեծ Հայքը Խոսրով Կոտակի, Տիրանի, Արշակ 2-րդի ու Պապի օրոք: Վարազդատի գահակալությունը և Հայաստանի քաղաքակա դերի աստիճանական անկումը: 376 թ. պարսկա-հռոմեական բանակցությունները Մեծ Հայքի բաժանքի վերաբերյալ: Վարազդատի գահընկեցության իրավաքաղաքական պատճառները, Մանվել Մամիկոնյանի խնամակալությունը: Հայաստանի փաստացի բաժանումը Արշակ 3-ի և Խոսրովի միջև: Հայաստանի 387 թ. պարսկա-հռոմեական բաժանումը: Արշակունիների թագավորության անկումը; | 2 | ՊԳ 2, 3, 4, 5, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 16, 17, 18, 19, 20, 23, 27, 28, 29, 30, 36, 38, 40, 41, 42, 43, 44, ԼԳ 1, 2, 3, 4, 5 |
| 5. | Բագրատունյաց թագավորությունը | Բագրատունիների թագավորության հաստատումը, վերելքը, դաշնային բնույթ ստանալն ու աստիճանական անկումը: Բյուզանդիան և Հայաստանը 10-11-րդ դդ. | 2 | ՊԳ 4, 63, 64, 65, 66, 67, 68, 69, ԼԳ 10, 11 |
| 6. | Թյուրքական արշավանքները Հայաստան և նրանց տիրապետությունը | Թյուրքական գործոնի ներթափանցումը Առաջավոր Ասիա, թյուրքական արշավանքները Այսրկովկաս և Հայաստան: Մանազկերտի ճակատամարտը և թյուրքերի տիրապետության հաստատումը Հայաստանում և Փոքր Ասիայում | 2 | ՊԳ 69, 70, ԼԳ 13 |
| 7. | Հայ-վրացական ազատագրական պայքարը թյուրքերի դեմ 12-13-րդ դդ. և Զաքարյանների իշխանապետության հաստատումը | Հայ ազնվականությունը Վրաստանում, նրա դերի աճը Դավիթ Շինարարի օրոք, հակասելջուկյան պայքարի ընթացքը, Սարգիս Զաքարյան, Զաքարե Զաքարյան, Իվանե: Հայաստանի կենտրոնական և հյուսիսարևելյան շրջանների ազատագրումը, Զաքարյան իշխանապետության կազմավորումը, Զաքարյաններն ու նրանցից կախյալ իշխանությունները | 1 | ՊԳ. 69, 70, ԼԳ 13 |
| | | | | |

**15.2 Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ**

| հ/հ | *Թեմա* | Ուսումնասիրվող հարցեր | *Ժամաքանակ* | Ստուգման ձևը | Գրականություն[10] |
|---|---|---|---|---|---|
| 1. | **Հայաստանի վարչաքաղաքական դրությունը 5-7-րդ դդ.** | Մեծ Հայքի արևելյան մասում պարսկական մարզպանական կառավարման հաստատումը, Սասանյան արքունիքի քաղաքականությունը հայ նախարարական դասի և եկեղեցու հանդեպ, Հայաստանի առաջին մարզպանները: 449 թ. կրոնափոխության առաջարկն ու հակապարսկական ապստամբության սկիզբը: Ապստամբության ընթացքը, արդյունքներն ու հետևանքները; Սասանյան արքունիքի սոցիալական և կրոնական քաղաքականություն Հայաստանում Պերոզի օրոք: Հայոց 481-484 թթ. ապստամբությունը: Բյուզանդիայի վարչաքաղաքական վերափոխություններն Արևմտյան Հայաստանում 5-րդ դ.: Հուստինիանոսի ռեֆորմները Արևմտյան Հայաստանում: Հայաստանը 7-րդ դ. առաջին տասնամյակներին, պարսկա-բյուզանդական հակամարտության վերջին փուլը և Հայոց իշխանապետության հաստատումը: Արաբական արշավանքներն ու տիրապետության հաստատումը Հայաստանում | 2 | Բանավոր, թեստային | ՊԳ 2, 4,26, 30, 34, 35, 37, 40, 45, 46, 47, 48, 49, 50, 51, 52. ԼԳ 2, 5, 6 |
| 2. | **Ուշ հելլենիստական և վաղ միջնադարյան Հայաստանի մշակույթն ու պետական կարգը** | Ուշ հելլենիստական դարաշրջանի Հայաստանի մշակույթի առանձնահատկությունները: Քրիստոնեության ընդունումը որպես մշակութային հեղաշրջման նախապայման: Հայաստանի վաղքրիստոնեական դարաշրջանի հոգևոր և նյութական մշակույթը | 4 | Բանավոր, թեստային | ՊԳ 4,12, ԼԳ2, 5, 6 |
| 3. | **Հայաստանը և Արաբական խալիֆայությունը 7-9-րդ դդ** | Արևմտյան Հայաստանի վարչաքաղաքական դրությունը 7-9-րդ դարերում: Բնակչությունը, կառավարման համակարգը, հոգևոր և մշակութային կյանքը: Հայերի հակաարաբական ապստամբությունները 8-9-րդ դ., դրանց ընթացքն ու հետևանքները: Մամիկոնյաններ ու Բագրատունիներ: Հայաստանի ինքնավարության հաստատումը 9-րդ դ. երկրորդ կեսին | 2 | Բանավոր, թեստային | ՊԳ 4, 53, 54, 55, 56, 57, 58, 59, 60, 61, 62, 69, ԼԳ 7, 8 |

## 11.2. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

[10] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

| հ/հ | Ինքնուրույն աշխատանքի թեմաները | Աշխատանքի տեսակը[11] | Ներկայացման ժամկետները | Ստուգման ձևը | Գրականություն[12] |
|---|---|---|---|---|---|
| 1. | Տրդատ 1-ի քաղաքական դիմապատկերը | Ռեֆերատ | Կիսամյակի վերջ | բանավոր | ՊԳ. 1, 2, 3, 4, 5, 6, 10, ԼԳ 1, 3, 5 |
| 2. | Տրդատ3-րդի քաղաքական դիմապատկերը | Ռեֆերատ | Կիսամյակի վերջ | բանավոր | ՊԳ 2, 3, 4, 5, 8, 16, 17, 18, 19, 20, 27, 28, 29, 30, 36, 38, 40, 41, 42, 43, 44, ԼԳ 1, 2, 5 |
| 3. | Գրիգոր Լուսավորչի կրոնաքաղաքական դիմապատկերը | Ռեֆերատ | Կիսամյակի վերջ | բանավոր | ՊԳ 1, 2, 3, 5, 27, 30, 40, 41, 42, 43 |
| 4. | Արշակ 2-րդի քաղաքական դիմապատկերը | Ռեֆերատ | Կիսամյակի վերջ | բանավոր | Պ.Գ. 1, 2, 4, 20, 26, 27, 29, 30, 34. 37, 40, ԼԳ 1, 2 |
| 5. | Պապ Արշակունու քաղաքական դիմապատկերը | Ռեֆերատ | Կիսամյակի վերջ | բանավոր | Պ.Գ. 1, 2, 4, 20, 26, 27, 29, 30, 34. 37, 40, ԼԳ 1, 2 |
| 6. | Վասակ Սյունու քաղաքական դիմապատկերը | Ռեֆերատ | Կիսամյակի վերջ | բանավոր | ՊԳ 38, 40, 46, 47, 48, 49, 51 |
| 7. | Թեոդորոս Ռշտունու քաղաքական դիմապատկերը | Ռեֆերատ | Կիսամյակի վերջ | բանավոր | ՊԳ 57, 59, 61, 62 |
| 8. | Աշոտ 1 Բագրատունու քաղաքական դիմապատկերը | Ռեֆերատ | Կիսամյակի վերջ | բանավոր | ՊԳ 4, 63, 64, 65, 66, 67, 68, 69, ԼԳ 10, 11 |
| 9. | Սմբատ 1-ի քաղաքական դիմապատկերը | Ռեֆերատ | Կիսամյակի վերջ | բանավոր | ՊԳ 4, 63, 64, 65, 66, 67, 68, 69, ԼԳ 10, 11 |
| 10 | Գագիկ 1-ի քաղաքական դիմապատկերը | Ռեֆերատ | Կիսամյակի վերջ | բանավոր | ՊԳ 4, 63, 64, 65, 66, 67, 68, 69, ԼԳ 10, 11 |

## 12. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում[13]

| Ռեսուրսի անվանումը | Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում) |
|---|---|
| Լսարան (հատուկ կահավորմամբ) | Ինտերակտ. գրատ. |
| Նյութեր լաբորատոր աշխատանքների համար | |

---

[11] Տես 7-րդ կետի հինգերորդ պարբերությունը ռեֆերատ

[12] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլ ռեֆերատ և

[13] Նշվում են սարք-սարքավորումների, համակարգչային ծրագրերի նկարագրությունները և քանակը, որոնք անհրաժեշտ են տվյալ դասընթացի ուսումնական գործընթացը կազմակերպելու համար

| | |
|---|---|
| Սարքեր, սարքավորումներ | |
| Համակարգչային ծրագրեր | |
| Այլ | |

## 13. Գնահատում

Համալսարանում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրառման հիմնական նպատակներն են՝

- կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- իրականացնել ինքնուրույն առաջադրանքների, ընթացիկ ստուգումների (ստուգարքներ և քննություններ), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառում հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների ներմուծման միջոցով՝ ի նպաստ ուսումնառության գործընթացի բարելավման:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի[14]:

### 13.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝

- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում՝ առավելագույնը 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

### 13.2. Ուսանողների գիտելիքների ստուգում.

Դասընթացն ամփոփվում է քննությամբ:

Քննությամբ ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում բանավոր քննության միջոցով և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:[15]

### 13.3. Հարցաշար (ըստ ծրագրի)

---

[14]«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ» (ընդունված ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից 30.062022թ.),

[15] Կիրառվում է կամ առաջին, կամ երկրորդ պարբերությունն ըստ դասընթացի ամփոփման ձևի:

1. Մեծ Հայքի թագավորությունը 2-34 թթ.:
2. Մեծ Հայքի թագավորությունը 34-51 թթ.:
3. Տրդատ 1-ի գահակալությունը և Կորբուլոնի արշավանքը Հայաստան
4. Պետոսի արշավանքը Հայաստան և Հռանդեայի համաձայնությունը
5. Հայաստանը Տրդատ 1-ի և Սանատրուկի կառավարման օրոք
6. Տրայանոս կայսեր Արևելյան արշավանքը և Հայաստանը
7. Հայաստանը Վաղարշ 1-ի և Սոհեմոսի կառավարման օրոք
8. Արշակունիների հարստության հաստատումը Մեծ Հայքում
9. Անտոնինոս Կարակալլա կայսերը և Մեծ Հայքը
10. Սասանյան դինաստիայի հաստատումը Իրանում և հայ Արշակունիների պայքարը նրանց դեմ
11. Միսիխիսի 244 թ. պայմանագիրը և Մեծ Հայքի պարսկահռոմեական բաժանումը
12. Մեծ Հայքի արևելյան հատվածը Սասանյան գահաժառանգների ոստան
13. Մեծ Հայքի արևմտյան մասի վարչաքաղաքական կացությունը 276-288 թթ.. Տրդատ Գ
14. 296-298թթ. Պարսկահռոմեական պատերազմը, Մծբինի պայմանագիրը և Մեծ Հայքի վերամիավորումը
15. Տրդատ 3-րդի վարչառազմական վերափոխությունները
16. Քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն
17. Մեծ Հայքը Խոսրով Կոտակի օրոք
18. Պարսկա-հռոմեական մրցակցությունը և Շապուհ 2-րդի արշավանքները Հայաստան Խոսրով Կոտակի օրոք
19. Հայաստանը Տիրանի օրոք
20. Մեծ Հայքի թագավորությունը Արշակ Բ-ի օրոք
21. Մեծ Հայքի թագավորությունը Պապ Արշակունու օրոք
22. Վարազդատի գահակալությունը և Մեծ Հայքի 376/377 թ. պարսկահռոմեական բաժանումը
23. Մեծ Հայքը Մանվելի խնամակալության օրոք. Արշակ 3-րդ:
24. Մեծ Հայքի 385-387 թթ. պարսկահռոմեական բաժանումը
25. Մեծ Հայքի արևելյան մասը Խոսրով Գ-ի և Վռամշապուհի օրոք:
26. Հայոց նոր այբուբենի ստեղծման կրոնաքաղաքական նշանակությունը
27. Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության անկումը:
28. Ուշ հելլենիստական մշակույթը Հայաստանում. Գրականությունը և պատմագրությունը
29. Ուշ հելլենիստական դարաշրջանի հայկական պաշտամունքը
30. Մեծ Հայքի պետական կարգը Արշակունիների դարաշրջանում
31. Արևելյան Հայաստանը Սասանյան Պարսկաստանի մարզպանություն. տարածքը, կառավարման համակարգը,
32. Սասանյան Պարսկաստանի վարչական, կրոնական, հարկային և սոցիալական քաղաքականությունը 428-449 թթ.
33. Պարսից արքունիքի՝ 449 թ. կրոնափոխության պահանջը և հայ ժողովրդի ապստամբական շարժումը 449-450 թթ.

34. 450 թ. Փայտակարանի հայ-պարսկական համաձայնությունը և ապստամբական շարժման հետագա ընթացքը: Ավարայրի ճակատամարտը
35. Մարզպանական Հայաստանը 5-րդ դ. 60-70-ական թթ. Վահան Մամիկոնյան
36. Մարզպանական Հայաստանի հակապարսկական ապստամբությունը. Ակոռիի ճակատամարտը
37. Մարզպանական Հայաստանի հակապարսկական ապստամբության ընթացքը 482-483 թթ.
38. Մարզպանական Հայաստանի հակապարսկական ապստամբության ընթացքը 483-484 թթ. Նվարսակի հաշտությունը
39. Արևմտյան Հայաստանի ռազմավարչական և սոցիալ-քաղաքական վերաձևությունները Հուստինիանոս 1-ի օրոք:
40. Հակաբյուզանդական-հակահուստինիոսական ելույթները Արևմտյան Հայաստանում և 562 թ. պարսկա-բյուզանդական հաշտությունը
41. Արևելահայոց 571-572 թթ. ապստամբությունը
42. Պարսկա-բյուզանդական 20-ամյա պատերազմը և Հայաստանի 591 թ. բաժանումը
43. Հայոց գրերի և հայատառ գրականության ստեղծման քաղաքական և հոգևոր-մշակութային շարժառիթները
44. Արաբական խալիֆայության հզորացումն ու արաբների առաջին ներխուժումները Հայաստան
45. Հայաստանի քաղաքական կողմնորոշման հարցը և 652 թ. հայ-արաբական պայմանագիրը
46. Բյուզանդական և արաբական արշավանքները Հայաստան 652-654 թթ.
47. Հայաստանի քաղաքական դրությունը 7-րդ դ. երկրորդ կեսերին
48. Արաբա-բյուզանդական հակամարտությունն ու արաբական տիրապետության հաստատումը Հայաստանում
49. Արաբների հողային, հարկային և կրոնական քաղաքականությունը Հայաստանում 8-րդ դ.
50. Արաբական ցեղերի մասսայական վերաբնակեցումները Հայաստանում և արաբական վարչական միավորների առաջացումը
51. Արաբների՝ հայ նախարարարական տների և զինվորական վերանախավի ոչնչացման քաղաքականությունը 8 –ր դ. սկզբներին
52. Արևմտյան Հայաստանը 7-9-րդ դդ.
53. Հակաարաբական ապստամբությունները 8-9 դդ.
54. Հայերի 850-855 թթ. հակաարաբական ապստամբությունը
55. Հայաստանը Աշոտ Բագրատունու իշխանապետության օրոք՝ 855-885 թթ.
56. Բագրատունյաց թագավորության ստեղծումը. Աշոտ Ա և Սմբատ Բ
57. Բագրատունյաց Հայաստանը Աշոտ Բ-ի և Աբասի կառավարման օրոք
58. Բագրատունյաց Հայաստանը Աշոտ Ողորմածի և Սմբատ Բ-ի օրոք:
59. Բագրատունյաց Հայաստանը Գագիկ Ա-ի օրոք
60. Բագրատունյաց Հայաստանի թուլացումն ու անկումը
61. Սելջուկ-թյուրքերի առաջին երեք արշավանքները Հայաստան

62. Սելջուկ թյուրքերի չորրորդ արշավանքը և թյուրքական տիրապետության հաստատումը Հայաստանում
63. Հայ-վրացական ազատագրական պայքարը 12-13 դդ. և Հյուսային ու հյուսիս-արևելյան Հայաստանի ազատագրումը
64. Զաքարյան իշխանապետությունը

a. **Գնահատման չափանիշները**[16].
- Տեսական գիտելիքներ
- Սեմինար պարապմունքներ
- Ինքնուրույն աշխատանք

[16] Լրացվում է ըստ ամբիոնի /դասախոսի որոշման

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

**Մասնագիտություն՝** 022201.00.6 - պատմություն______________
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

**Կրթական ծրագիր՝** 022201.01.6 – պատմություն___________
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

**Որակավորման աստիճան՝** __________բակալավր__________________
/բակալավր, մագիստրատուրա/

Վանաձոր 2023

Հեռակա ուսուցման համակարգ

<table>
<tr><td>Դասընթացի թվանիշը, անվանումը</td><td colspan="4">Պ/բ –002- ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ -2</td></tr>
<tr><td>Դասընթացին հատկացվող կրեդիտը</td><td colspan="4">5 կրեդիտ</td></tr>
<tr><td>Ուսումնառության տարի / կիսամյակ</td><td colspan="4">2-րդ տարի, 3-րդ կիսամյակ</td></tr>
<tr><td rowspan="6">Ժամերի բաշխումը</td><td rowspan="4">Լսարանային</td><td rowspan="4">20</td><td>Դասախոսություն</td><td>12</td></tr>
<tr><td>Սեմինար</td><td>8</td></tr>
<tr><td>Լաբորատոր աշխատանք</td><td></td></tr>
<tr><td>Գործնական աշխատանք</td><td></td></tr>
<tr><td>Ինքնուրույն</td><td colspan="3">130</td></tr>
<tr><td>Ընդամենը</td><td colspan="3">150</td></tr>
<tr><td>Ստուգման ձևը</td><td colspan="4">քննություն</td></tr>
<tr><td>Դասընթացի նպատակը</td><td colspan="4">▪ Բազմակողմանի պատկերացումներ տալ ուշ անտիկ և միջնադարի դարաշրջաններում հայկականկն քաղաքակրթության քաղաքական, հասարակական-տնտեսական և մշակութային զարգացման ինքնատիպ ընթացքի, հարևան երկրների ու ժողովուրդների հետ նրա բազմաբնույթ փոխհարաբերությունների մասին:<br>▪ Տեսական գիտելիքներ տալ Արշակունիների պետականության, Հայաստանում պարսկա-հռոմեական (բյուզանդական) և արաբական տիրապետությունների, Բագրատունիների պատականության ձրավորման, զարգացման և անկման, սելջուկ թյուրերի արշավանքների ու տիրապետության հաստատման մասին:<br>▪ Տեսական գիտելիքներ տալ ուշ անտիկ դարաշրջանում և միջնադարում հայ ժողովրդի մղած ազատագրական շարժումների ընթացքի, արդյունքների ու հետևանքների մասին:<br>▪ Համակարգված պատկերացում տալ ուշ անտիկ դարաշրջանում և միջնադարում Պատմական Հայաստանի տարածքում կատարված էթնոքաղաքական և ժողովրդագրական տեղաշարժերի, մշակույթային կյանքի և հասարակական հարաբերությունների մասին:<br>▪ Ձևավորել Հայոց պատմության ընձեռնած տվյալները համակարգելու, տեսական վերլուծության ենթարկելու, սեփական դիրքորոշումը փաստարկելու և ինքնուրույն հետևություններ անելու կարողություն:</td></tr>
<tr><td>Դասընթացի վերջնարդյունքները</td><td colspan="4">Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</td></tr>
</table>

| | |
|---|---|
| | 1. կարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում՝ պատմական իրողությունները հասկանալու, փաստերն ու երևույթները համեմատելու, Հայոց պատմության փուլերն ու դրանց օրինաչափությունները համադրելու և համակողմանի գնահատելու, վերլուծելու, դիրքորոշումներ ձևակերպելու համար,<br>2. կարողանա համադրել հին և միջնադարյան Հայոց պետականությունների վարչաքաղաքական փորձը, վեր հանել դրանց ժառանգորդության և մշակութային ընդհանրության հարատևման պատճառներն ու առանձնահատկությունները,<br>3. կարողանա համակարգել Հայոց պատմության վերաբերյալ բազմաբնույթ գիտելիքները, դրանք ենթարկել տեսական վերլուծության, փաստարկել սեփական դիրքորոշումը և կատարել ինքնուրույն հետևություններ,<br>4. կարողանա վերլուծել օտար տիրապետությունների ընթացքում Հայաստանի վարչական համակարգերի վերափոխությունների ընթացքը, Հայաստանի էթնիկ և ժողովրդագրական պատկերների փոփոխությունները,<br>5. կարողանա ձևավորել դիրքորոշումներ Հայոց պատմության ուշ անտիկ և միջնադարյան դարաշրջանների հիմնախնդիրների նկատմամբ և կատարել դրանց հետազոտություն: |
| **Դասընթացի բովանդակությունը** | 1. Մեծ Հայքի թագավորությունը 1-ին դ. դրածո արքաների օրոք<br>2. Պարթևա-հռոմեական հակամարտությունը և Հայաստանը 2-3-րդ դ. սկզբներին<br>3. Մեծ Հայքը 3-րդ դ. պարսկա-հռոմեական հակամարտության ոլորտում<br>4. Մեծ Հայքի թագավորության աստիճանական թուլացումն ու անկումը<br>5. Հայաստանի վարչաքաղաքական դրությունը 5-7-րդ դդ.<br>6. Ուշ հելլենիստական և վաղ միջնադարյան Հայաստանի մշակույթն ու պետական կարգը<br>7. Հայաստանը և Արաբական խալիֆայությունը 7-9-րդ դդ<br>8. Բագրատունյաց թագավորությունը<br>9. Թյուրքական արշավանքները Հայաստան և նրանց տիրապետությունը<br>10. Հայ-վրացական ազատագրական պայքարը թյուրքերի դեմ 12-13-րդ դդ. և Զաքարյանների իշխանապետության հաստատումը |

| | |
|---|---|
| **Գնահատման մեթոդները և չափանիշները** | ▪ գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 40 միավոր,<br>▪ ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,<br>▪ դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը 40 միավոր,<br>▪ ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր: |
| **Գրականություն** | Պարտադիր- 1-71<br>Լրացուցիչ- 1-13 |